

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 6

8 ՓԵՏՐՎԱՐ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար Բառսուն դրո.
էւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ
5 ռուպլի: Թղթաստացական ծախքը համագրութեան վճարէ: Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ
հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է իսկոյն իւնացնեն համագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առաւ-
կութիւնները նկատուողութեան չեն առնուի:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, զիւրամասշնչի պայ-
մաններով:

Ձեռնիկէ կը ծախուի ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليهده غاطهده (ماسيس) غزتهسى ادارهسى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԱՅՐ, ԿԻՆ, ՏՂԱՅ

Ս'արդս տենդի հիւանդութենէ վերջը տկար կը մնայ, մանաւանդ տղայ մը :
 թէպէտեւ հարկ չիտեսնուի, հիւանդին պէտք է տալ



Շեշերու վրայ ասոր ուշա-
 դրութիւնը ընել պէտք է:

18

SCOTT'S EMULSION

և տկարութիւնը անմիջապէս և վստահափար կը փարատէ
 և կը տեսնուի որ

ԸՍԳՈԹԻ ԲԵՂԵԴՐՈՒԹԻՈՒՆ

մարմինը պատող բոլոր տկարութիւններու դեմ
 ամենամեծ դեղ է: Ըրեգական տակ ասոր հաւասար
 բան մը չիկայ. այնպէս կատարեալ կը բժշկէ՝ որ կը
 կարծուի թէ հիւանդութիւնը կուտէ ու կը կլլէ:

Բոլոր ղեղադրածները և ղեղալծածները ինչ ծախս:

ԹԷՅ
 ԹԷՅ
 ԹԷՅ



Ընտիր
 Հոտաւէտ
 Խնայողական

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ Վաճառատունը թէ՛ պատրաստ՝ եւ թէ՛ օր ըստ օրէ
 հասնող թարմ եւ աղնուագոյն տեսակ թէյներով կրնայ այսօր անմրցելի աժանութեամբ
 գոհացում տալ թէյի նոյն իսկ էն խստապահանջ սիրահարներուն: ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱ-
 ԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի դաւառներու հետ եւ յանձնարարութիւնք կը
 կատարուին ամենայն ճշդութեամբ:

Աժան, ընտիր, ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարեցը ան-
 գամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ Վաճառատունը, Ճէլալ-Պէյ խա-
 նի կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ եւ փոքրաքանակ թէյի ճօխ մթերք մը:

ԱԺԱՆ ԱԺԱՆ ԱԺԱՆ

ՄԱՍԻՆ

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 6

8 ՓԵՏՐՎԱՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անձնական լիցատակներ (Գր. Շահինեանի մահուան առթիւ) ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ: — Հանգիստ (Բանաստեղծութիւն) ԱՂԵՔՍ. ՓԱՆՈՍԵԱՆ: — Ոսանիկ Տեր-Մարգարեանց (Զ. յօդուած) ՄԷՐՍԷՏԷՍ: — Շոգ մոգ մեծումներ. ԳՐԻԶԱՆԹԷՄ: — Դազալի մը վրայ. ՄԷՐՍԷՏԷՍ: — Այծեմնիկի փունջը (Թերթոն) ԱՆՏՐԷ ԹԷՐՐԻԷ: — Ժամանցի բաժինը. ՄԱՆՈ: — Յուշատետր:

ԱՆՁՆԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ԳՐԻԴՈՐ ՇԱՀԻՆԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱԹԹԻԻ

Ծնունդի օրն էր. կրօնական հանդիսութիւններու խոնջէնքը զուարթ թոյլութեան պէս շոյող ապաւորութիւն մը ներարկած էր հոգիէն ներս, երբ սուրհանդակը հասաւ: Այդքան երջանիկ օրուան մը մերը ձգակարօտ սպասումը, սակայն, ցուրտ տարտուռով մը փոխարինուեցաւ, երբ յանկարծ կարդացի, մեր շատ սիրած երիտասարդին, Գ. Շահինեանի մահը: Որչա՛րի դէշ բան է մահուան մը լուրը ստանալ անակնկալօրէն, Ծնունդի օր մը, ուր բոլոր մարդիկ կեանքի վրայ միայն կը խորհին և կը խորհին քրիստոնէական այն վերածնութեան վրայ, որով աշխարհս օժտուեցաւ: Յիսուայի Ծնունդէն: Անիրաւութիւն մըն էր, բնութեան օրէնքին մէկ կծու. կասալին էր ո՛չ միայն բարեկամիս մահը, ճիշդ այն սարիքին մէջ, ուր մարդ հազիւ կեանքի վրայ խորհիլ կը սկսի, այլ և այդ մահուան լուրին ժամանումը Ծնունդի օրուան պէս ապրելու հանդիսաւոր մոտենողութեան միջոցին: Շահինեան մէկն էր անոնցմէ որոնցմով մենք կազմած էինք մեր սրտի ու հոգիի ազդակցութիւնը. անկաւ եղբայր մըն էր մեզի համար, եղբայր մը, որ միշտ իր արժանաւոր տեղը ունեցաւ գրիչի ու հանձարի իր կոչումին մէջ: Հետեւաբար իր մահը մեզի ողբալ կու տայ իր մէջ ո՛չ միայն մեռած բարե-

կամը, այլ և մեռած դրողէտը: Իր չքաղաւառած ու վշտառիթ մահը անգամ մըն ալ եկաւ մեզի յիշեցնելու թէ կեանքն ու մահը յոռի չըջանն են բնութեան: Անընդհատ զիրար կը գլեն, իրարու տեղ կը բռնեն: Երկուքին գոյութիւնը մշտնջենական կռիւն է լինելութեան և ոչ-լինելութեան: Մարդկութիւնը դարերով այդ կռտաղի ըմբշամարտին հանդիսատեսը ըլլալով հանդերձ, դեռ չէ կրցած ճշդել, թէ մը կողմը կը հակի յազդութեան նոժարը: Անոնց փոխադարձ զգեանուններն ա՛յնքան արագ և անոնց վերականգնումները ա՛յնքան ակնթարթային կը դառնան, չփոթելու համար զիրենք դիտողները, որոնք յաւիտենապէս ալ իրենց ենթակաները պիտի ըլլան օրէ օր:

Բանաստեղծի զգայութիւնով ուրիշներուն վրայ լացող Շահինեան, կեանքի և մահուան գոտեմարտին այդ դժբախտ պարտեալը, այսօր ինքն է որ աւարկան կ'ըլլայ մեր արցունքներուն, զոր իր մահը կը խլէ մեր աչերէն, իր կեանքին ծնուցած ժպտաները ըզքանելով մեր հոգւոյն մէջէն: Իր երիտասարդի մահը՝ եղաւ իր կեանքի տաճարի ամենէն սեւ վերջակէտը, վախճաններուն ամենէն յուզիչը: Ու ինք, կեանքի մահուան ծաղաւտ պէս պիտութիւններուն, անոր պա-

տաճական երջանկութիւններուն, և չարունակական հառաչանքներուն մշտածուփ շարժանութիւններուն և տեղատուութիւններուն 26 տարիներու հանգոյցը հաղիւ հիւսած, ահա յանկարծ կը փշրուի յաւիտենական շարժանութենէն փրթած կոհակի մը պէս, որ մերթ կը զարնուի սեպ՝ սեւ ժայռերու, և ցաւի տրտունջով մը, խուսափուկ հառաչանքի ճողփիւնով մը ետ կը քաշուի յուսահատ, անդամահերձուած. և երբեմն կը համբուրէ փխրուն եղերքներ, ու մերթ կը պարուբերուի երկու ալիքներու մէջ, և վերջ ի վերջոյ իր բզիկ բզիկ եղած ձերմակ ու պղտոր փրփուրներով կը դառնայ մեծ—ամբողջը լրացնելու համար: Ու այսօր որ անիկա այլ ևս մեռած է, դեռ նոր պիտի սկսի ապրիլ յիշատակին մէջ անոնց, որոնք գիտցան զինքը արժանաւորապէս սիրել ու գնահատել: Եւ այդ զինքը սիրողներն ու գնահատողներն են, որ իր մահովը կը տուժեն այսօր, և որոնց համար մանաւանդ խոր կ'ազդէ անոր երիտասարդի մահը: Եւ այդ մահը պարապ մը կը թողու, Շահինեանի տեղը, զոր ոչ ոք պիտի կրնայ լեցնել կամ բռնել, ա'յնքան զօրաւոր ինքնութիւն մըն էր անիկա, անհատ մը, որուն համազօր մը չպիտի կրնանք գտնել երբեք: Անիկա իր մտաւոր կարողութիւններով, իր շեշտուած նկարագրով, և իր աշխատողի զուարթ հոգիովը, անջատ, որոշուած եւ մըն էր, զոր կարելի չէր ուրիշի մը հետ շփոթել: Հակառակ իր ծածկանուններուն զանազանականութեան՝ դրական ասպարէզի մէջ, կրցաւ այդ ծպտուած անուններուն տակ պահել այն դրական կորովի հակումը և յառաջգիմական ձգտումը, որոնք միշտ Շահինեանը կը մատնանշէին իրենց մէջ: Գրական ծպտումները բնաւ մոլորում մը, չեղում մը չկրցին յառաջ բերել իր գրչի ծայրէն, որ սրտէն կը քաղէր իր հիւթը: Եւ իր սիրտը այնքան մտքուր և զարգացումի յարատեւ, ամէն բանէ առաջ իր մտածումներուն կայծ տուողն եղաւ: Իր բառերուն երաժշտութիւնը, անմեղ հեշտանքով մը կ'ողողէր զինքը կարգացողները. չէր թողոր որ իր զգացողի խանդավառութիւնը մոլորեցնէ զինքը սանկ բառերու գունագեղու-

թեան թեթեւ թեւերուն վրայ. իր խորհողի ծանրալըլութիւնը հրճուանքի բառերուն քղանցքէն կը կախէր յաճախ քննադատի եւ ուղղադատի անանկ կապարներ, որոնք իր պատմական ու բանասիրական հմտութիւններովը ձուլուած էին: Եւ Շահինեան կը սիրուէր ամենէն, որովհետեւ, կրցած էր՝ շատ քիչ տարիներու մէջ՝ իր ծոցը համերաշխութիւն մը ստեղծել խորհող և զգացող էականներուն միջև: Եւ ահա այս եղաւ այն զաւոնիքը, որ Շահինեանի ոչ զգայամոլ մը եղաւ և ոչ ցուրտ իրապաշտ մը: Խորհելու և զգալու ներգաշնակութիւնը, միակ չուկէան է, ուրիշ մարդ դուրս կու գայ՝ իր մաքի ու սրտի կարողութիւններուն մէջ յարդուելու համար:

* * *

Գ. Շահինեան դեռ 17 տարեկան պատանի մըն էր երբ Վանք մտաւ, իր ընկերներուն հետ Դպրեվանքի երրորդ դասարանը կառմելու համար: Այդ նորակազմ դասարանին մէջ Գրիգոր Շահինեանի հետ ընդունակութեան տեսակէտով զոյգ կը քալէր նաեւ Եւ. Դովիւացի Գառնիկ Տէրտէրեան, որ յետոյ ինքն իրեն համար առեւտրական առաքարէլը ընդգրկեց: Իր ունեցած մաքի զարգացման ընդունակութիւնը զօրաւոր պատճառ մը եղաւ, որ ամէն ոք զինքը սիրէ Վանքին մէջ: Դպրեվանքի արդի վերատեսուէր այդ երիտասարդին մէջ կանուխէն մատնանշեց ապագայի մարդը: Եւ այդ օրէն մենք սիրեցինք Շահինեանը, ապագայ դրաղէտը: Շահինեան իր ընկերակիցներուն նախանձին ու հակառակութիւններուն մէջ անվհատ կորցւոյ մը ցոյց տուաւ միշտ: Ապրիլը իր նպատակը չէր կաշմեր բնաւ. անիկա ապրիլը միջոց մը միայն կը համարէր զարգացման ու յառաջգիմութեան մեծ նպատակին համար: Իր զարգացումին հետ քալեցին իր դասարանցիներուն սինկորոս առեւտրութիւնները և Շահինեան միշտ կը մնար այն անխօսուկ, լուրջ պատանին որ խօսելէ ու նախատինքները փոխաբիւնելէ աւելի լաւ կը սեպէր լուռ աշխատութիւնը: Եւ այդ հակասութիւններէն իր վերաւորուած հոգին, նոր ուժ, նոր կորով կը ոտանար հետզհետէ, և մրցակցութիւններու

մէջ անկիւա առաջինը կաթառաջիններէն մէկը ըլլալու սահմանուած էր միշտ: Դեռ դպրոցական դրաստիզանէն չբաժնուած, Շահինեան հարկւրներով թարգմանութիւններ կամ ինքնագիր բանաստեղծութիւններ ունէր իր դասատուներուն շարքը և հնախօսութիւնն ու հայ բանասիրութիւնը ամենէն աւելի իր միտքը հետաքրքրող նիւթերը կզան: Այսօր, որ Շահինեան սպիւս մեռելներու աշխարհին կը պատկանի, կրնամ հրապարակաւ ըսել թէ իր բռնած ուղղութեան մէջ եւս եղած էի իր մտերիմ—առաջնորդը, երբ տակաւին մենք ալ առաջին դասարանի սարկուսագ—աշակերտներէն էինք: Եւ այդ օրերէն, մեր սրտի ու մտքի մտքութիւնը կը լրացնուի թիւերը տեսնելով մինչև այն օրը երբ ա'լ ինքը անկողին ինկած, չէր կրնար գրիչ շարժել իմ հասցէին: Աշակերտական օրերուն այդ գուարթ ու մերթ տխուր յիշատակներս ամենքն ալ կու գան կը ցցուն այսօր մտքիս առջև, իրենց բոլոր թարմութիւններովը, իրենց բոլոր առեւտրութիւնովը, և այդ յիշատակներս ա'լ աւելի սուր կակիծով մը կ'առջնատեն հոգիս անոր տարածամ մահուանը հանդէսը:

* * *

Երեքուկէս տարիներու աշակերտութենէ մը վերջ, երբ կարգը եկած էր վիճակի ընտրութիւն մը ընել Դպրեվանքի այդ դասարանի աշակերտներուն, Գ. Շահինեան մէկն էր անոնցմէ որոնց կուսակցութեան կը տնկար Տեսչութիւնը, և որոնք ամենէն աւելի վիճակի ընտրութեան այդ վայրկեաններուն առջև դեղեւումներ ունեցան: Եղան վայրկեաններ, երբ Շահինեան արիւթիւնը ունեցաւ, իր ֆիզիքական բոլոր բերումները, իր մտքի արամադրութիւններուն բոլոր հակումները զոհել իր Տեսչութեան հանդէս ունեցած սիրոյն, այնքան մեծ էր եղած իր երախտագէտի սէրը: Եւ այդ հոգեկան ոգորումներու վայրկեաններէ մէկին, իր արցունքով լեցուած աչքերը ինձի կը դառնային, երբ մենք մեր նորընծայի քառասունքը կ'ապաշխարէինք: Վանքին ճամբան ցոյց տուի իրեն, ու միւսեայն ժամանակ աշխարհի ճամբան: Կը տեսնէի, թէ այդ կարճ պա-

տասխանա հոգեկան հրճումնք մը կ'աթթէր իրեն:

Ա'լ որոշած էր մեկնիլ, մտնելու համար կեանքի կռիւին մէջ, բանաստեղծական, և բազմակեանքի մը անուրջներէն ցատկելու համար զրական կեանքի վշուտ ճամբուն արահետը և հոն վնասուելու իր ազագան, իր անունը, իր գոհացումները:

1895 Յունիս 29ի հինգշաբթին էր, որ Դպրեվանքի երրորդ դասարանի աշակերտները մեկնեցան: Իր մեկնումին թարմ ապաւորութիւնները նոյն օրն իսկ արձանագրած էի յուշատետրիս մէջ, աւելորդ չեմ համարիր հոս նոյնութեամբ յառաջ բերել:—«Երէկ երեկոյ վերջնականապէս որոշած էր հրաժարիլ դպրոցէն: Այս առաւօտ, սակայն, նորէն դեղեւումներ ցոյց կու տայ իր վրայ, երախտագիտական նկատումներու երկիւղախառն վրդովումով մը: Եթէ մտածուի մը ունիմ այս պահուս, կ'ըսէր, սա է, թէ մի' գուցէ վիշտ պատճառեմ դասատուիս, հակառակ իր կամքին մեկնելովս: Այս առաւօտ նորէն ինձ կուգայ խորհուրդ հարցնելու, չիկնոտ անհամարձակութիւնով մը, որ վրդովումէ աւելի բան մը ունէր իր մէջը: Իրեն կ'առաջարկուի դպրոցի Տեսչութեան կողմէ, որ գոնէ տարի մըն ալ շարունակէ դպրոցը: Բնական էր որ իր առջև պարզէի այն հոյլ մը անպատահութիւնները, որոնք կրնային այդ մէկ տարուան մէջ զգուշիլ ընել ո'չ միայն դպրոցը, այլ և կեանքը, և այն ատեն ամէն բան կորսուած պիտի ըլլար իրեն համար: Պէտք էր ուրեմն բաժնուիլ իրարմէ: Յերէկի մեր տեսակցութիւններէն վերջ գիշերը, երբ ամէն ոք իր գրասեղանին առջև նստած էր, մենք երկուքս, ծառերու ստուերներուն տակ՝ լուսնի լուսով լուսաւորուած գիշերին մէջ, գիրար կը գիտէինք այն մտեւանդն յալիտակութիւնով, զոր իրարմէ ընդհուպ բաժնուելու հարկադրուած եղբայրներ կ'ունենան իրենց մէջ: Իր աչքերը թաց էին դեռ սրտակէզ արցունքներու կաթիլներէն: Բառ չէինք գտներ խօսիլու, արանքնիս անձկութեամբ կը զեղուր, երեք տարիներու անընդհատ և անբիծ մտերմութիւն մը վայրկեանի մը մէջ խտացած, անձնաւորուած էր: Իրարու ներ-

կայութիւնը միայն կը զգայինք : Գ. Շահին-
եան նախ բացաւ իր բերանը , և իր լափն չըմեն-
քուն մէջէն , առաջարկեց , որ երկնականարէն
երկու լոյս բնորոնք մեզի , և ամէն անգամ
որ հառաչք մը ելլէ մեր կուրծքէն , այդ լոյ-
սերուն նայինք , ու յիշենք զիրար : Չէի կըր-
նար պատասխանել իրեն , սիրտս կը սեղմուէր
երկաթ թաթերու մէջ , հոգիս լքուած կը
զգայի ու «այդ լոյսերը՝ չարաշուք ազդե-
ցութիւն մը ունին վրաս՝ ըսի վերջապէս .
մայր մը ունիմ , որ քսան տարիներէ ի վեր
անոնց մէջ կը բնակի , ամէն անգամ որ ա-
նոնց նայիմ , հեծկտուքներու հետ արցունքի
աղի կաթիլ մը երեսս կը թրջէ : Մեր սրտերը
ընտրած ենք արդէն , անոնց արտփումները
բաւական են մեր բաժանումի կոկիծը փա-
րատելու և յիշելու մէկըմէկ» :—«Կը հնչէ
զանգակը , որ զինքը դիւերային աղօթքի կը
հրաւիրէ : Այսօր ժամը 10ն էր , երբ մեր
ձգնարանը եկաւ իր հրաժեշտի ողջոյնը տա-
լու ինձ : Մէկ վայրկեանի մէջ նուազած էին
արդէն կարճատես իր աչքերը : Եւ հիմա որ
այս սողերը կը նուիրեմ իր յիշատակին , անի
յաճաքայլ սայլակը նստած , անտառներու
նստմաստուեր հովանիներէն կ'անցնի , կ'եր-
թայ , մօթ ու մօայլ երկինքով մը , իր հետ
տանելով սրտէս ու հոգիէս մաս մը , իր սրբ-
տին ու հոգիին միացուցած : Երթա՛ս բարով ,
եղբայրս» :

Յուշատետրէս քաղուած , ու օրը օրին
նօթագրուած այս ողջերթը , հէք Շահինեանի
համար այսօր մահուան ողջերթ մը կ'ըլլայ
դժբախտաբար , երբ անիկա կ'երթայ իր սի-
րական լուսաւորներէն մին բնորոնք , իր լու-
սաւոր հոգիին իրբւն օթեւան :

Դժբախտ Շահինեան :

ՄԱՌՇԵՂ, ՎԱՐԳԱՊԵՏ

(Մնացեալը յաջորդով)

Յաջորդ թիւով

ՀԻՆ ԴԷՄԵՆԻ

Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆԷ

ՏԵՂԵՐ ԹԵԼԵՐ

ՀԱՆԳԻՍՏ...

Իմ հեգ մարմինս ե նարահաւս ,
Գոյքի մը պէս՝ գործածուած շաւս ...
Կիրքեր-որդեր կրծեմ զայն վաւս :

Ո՛վ պիտի անոր
Ոյժ ու կեանք սայ նոր ...
—Կի՛նը արտփաւոր :

Իմ հեգ միտքս սեղեր ունի ,
Սեւ խոհերու մէջ խորունկի
Յաւի , սուգի եւ լալիւնի ... :

Ո՛վ պիտի անոր
Յունց ու թեւ սայ նոր ...
—Կի՛նը զօրաւոր :

Իմ հեգ արտիկա ունի դողեր ,
Չե՛ն ժպիտ հոն այգուն շողեր .
Յոյսը շաւո՛նց ե զայն բողեր ... :

Ո՛վ պիտի անոր
Անուրջներ սայ նոր ...
—Կի՛նը սիրածոր :

Իմ հեգ հոգիս հրմայաբափ ,
Մի՛շ պատրուած , մի՛շ դիւրախաբ ,
Տառապանքներ ունի անչափ ... :

Ո՛վ պիտի անոր
Ըստփառնք սայ նոր ...
—Կի՛նը , մեղիփօր :

—Ծովուն պէս խո՛ր ե , անիկայ ,
Երազներու՛ կի՛նն առաւիկայ ,
Ու մի՛շ զրգուէ , ու մի՛շ տկայ .

Կի՛նն անոյշ , աղուոր ,
Ապահով , անգոր ,
Ծոցն երանաւո՛ւրհ ... :

Գրկիդ մեջ, ես, ոսկերոսի՛,
Այլ եւս մարմնոյ, հոգւոյ, սրժի
Յաւ չունենամ երբեք պիտի,

Կի՛ն հաւասարիմ, .
Հանգստեա՛ն շիրիմ.
Բացուե՛, քե՛զ փարիմ . . . :

Ա. Ղ. Ե. Ս. Փ. Ն. Ս. Ն. Ն.

20 Յունուար 1903

Յաջորդ թիւով

Ի Տ Է Ս Լ Լ Ե Զ Ո Ւ Ն

ԳՐ. ՄԱԼԻԱՍԻ.

ՈՍՏԱՆԻԿ ՏԵՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆՅ

(ՎԵՅՆԵՐՈՐԴ ԵՕԴՈՒԱԾ)

Նախորդ յօդուածով բացատրեցի թէ ինչ-
պէ՛ս Ոստանիկ Տէր Մարգարեանց մեծաքա-
նակ ապրանք կը գնէր այլ և այլ վաճա-
ւատուէններէ, և թէ ինչպէ՛ս կարգ մը միջ-
նորդներու ձեռքով այդ ապրանքները ծա-
խելով հնչուն դրամի կը աճրանար: Միև-
նայն վարդապետութիւնը ի դորձ դրած է նաև
գոհարավաճառներու հանդէպ, որոնք ամէ-
նէն աւելի առարկայ դարձած են իր խար-
դախութեանց: Շատ մեծ ջանքերու պէտք
չունէր այդ մասին: Ինչպէ՛ս ըսի, շատ աղուոր
վտանգութիւն մը գոյացնել տուած էր իր
վրայ, և բարիգեան ծանօթ գոհարավաճառ-
ները իրարու նայելով՝ շարունակ ապրանք
կու տային աւանց ընաւ կատկածելու: Մնաց
որ, Ոստանիկ երկւնն կը վճարէր իր պարու-
քերը: Այսինքն, առաջին խանութպանի մը
ունեցած պարտքը կը գոյէր երկրորդ խա-
նութպանէ մը շորթած ապրանքներուն հա-
տցիւթով:

Այդ գոհարեղէնի առեւտուրին մէջ իր
գլխաւոր դորավիդները եղած են երկու միջ-
նորդներ, մէկը ծանօթ վաճառու մը՝ որ
ինքզինքը իւր Աղեքսանդր Տիւմա հօրնախ-
կին քարտուղարը կը ներկայացնէր, և միւսն
ալ Գերման Հրեայ մը՝ որ ամէնէն աւելի
Ոստանիկը մղած է գոհարեղէն շորթելու:
Ընդհանրապէ՛ս ի՛նքս ցոյց տուած է գոհարա-

վաճառի խանութները, և յետոյ, Ոստանիկի
ձեռքէն շատ վար դիմով առած է շորթուած
գոհարեղէնները: Պ. Մասէ չըսեր թէ այս
Հրեան ո՛ր և է առնչութիւն ունի՞. Հիշէր
անուն գոհարավաճառի մը հետ՝ որ շատ մեծ
դեր մը խաղացած է ձեռք անցուած գոհա-
րեղէններու վաճառման գործին մէջ, և որ
իր կարգին 30,000 Փրանք վրայ տուած է
Ոստանիկի հետ բացած հաշիւներուն երեսէն:

* * *

Այս կարգի առեւծախով մը Տէր-Մար-
գարեանց բաւական կորուստ կ'ընէր: Շոր-
թած ապրանքները յաճախ կը ստիպուէր կէ-
տէն պակաս գինով մը ծախել իր միջնորդ-
ներուն, որոնք այդ պատճառաւ արդէն եր-
բեք չեն բաժնուած իր քղանքէն: Այդպէ-
սով, այլ և այլ վաճառատուներէ քաշած
մէկ միլիոն ֆրանք արժողութեամբ ապրան-
քին փոխարէն՝ հազիւ 300,000 Փրանք հըն-
չուն դրամ ձեռք բերած է, և այդ գումարով
է որ կըցած է այնչափ փայլուն կեանք մը
վարել երկու տարի յաջորդաբար: Հրեայ
միջնորդը՝ զոր քիչ մը վերը յիշեցի, 10,000
Փրանքի գնած է իրմէ մարգարայեւ ման-
կակ մը՝ որուն բուն արժէքը 70,000 Փրան-
քի կը հասնէր: Դարձեալ, 1873ի առաջին
երեք ամիսներուն մէջ, քանի մը հարիւր հա-
զար ֆրանքի արժողութեամբ գոհարեղէն
ծախած է այլ և այլ միջնորդներու՝ 50,000
ֆրանք միայն ստանալով:

Այդ գործառնութեանց մէջ, Ոստանիկ
Մօն-ար-Բիթթէն ալ չէ մոռցած, Բարիզի
այդ ծանօթ հաստատութիւնը՝ որ փոխ դը-
րամ կու տայ ամէն տեսակ աւանդներու փո-
խարէն: Հոնկէ կարելի է դրամ ձեռք բերել
որչա՛փ ամենաթանկագին գոհարեղէններու
այնչափ մին ալ երեւակայուելիք ամէնէն
մոտի առարկաներու, կարասիներու՝ զոր օ-
րինակ գաւաղաններու, վերամաններու, և այլն
փոխարէն: Բարիզ ապրող բոլոր խարդախ-
ները ամէն առնն օգտուած են այդ հաստա-
տութիւնէն: Նոյն ինքն Տիկին Հիւմպէս բաղ-
միցս իր շորթած թանկագին առարկաները
հոն աւանդ դրած է, և թերթերը գրեցին
արդէն թէ ընտանեօք փախած օրն իսկ՝ Տի-

կին Բարեյրի միջոցաւ բաղմամբիւ գոհարե-
ղէններ աւանդ ձգած էր հոն՝ 40,000 Ֆր-
րանքի փոխարէն: Ոստանիկ ալ շատ անդամ-
ներ այդ հաստատութեան գիմած է, և ընդ-
հանրապէս ա՛յն ատեններուն՝ երբ միջնորդ-
ները շատ վար գիներով միայն ուղած են
գինել իր ձեռքը գանուող առարկաները: Մի
միայն մէկ անգամէն՝ 10,000 Ֆրանք դան-
ձած է՝ 40,000 Ֆրանք արժող դեղեցիկ ա-
ղարանջանի մը փոխարէն:

Երբեմն ալ՝ գոհարավաճառներէն առած
աղբանքները ուրիշ կերպով մը շահագործած
է: Իրեն օգնական ունենալով, այն վաշխա-
ւուն՝ որ ինքզինքը Աղեքսանդր Տիւմա Հօր
նախկին քարտուղարը կը հռչակէր, շորթած
մանեակներուն, մատանիներուն, աշխարան-
ջաններուն, ինչպէս նաեւ այդ կարգի բոլոր
առարկաներուն վրայի թանկագին քարերը,
մարգարիտները, և այլն ծախած է Հրեայ վա-
ճառականներու: Մնացած ոսկին կամ ար-
ծաթն ալ յետոյ կրկին դրամի վերածած է,
մաս առ մաս ոսկերիչներու ծախելով:

* * *

Այս իրողութիւնները՝ ամբողջովին եր-
եւան հանուած են Տէր Մարգարեանցի ձեռ-
բակալութեան վերջ, Բարեյրի ոտնկալու-
թեան կողմէ՝ և գլխաւորաբար Պ. Մատէի
հսկողութեամբ կատարուած քննութեանց
միջոցին: Մինչև ան ատեն, մի՛ միայն Ոս-
տանիկի չահակից անձերը տեղեկութիւն ու-
նեցած են բոլոր այդ խարդախութեանց
մասին, և ամէնքն ալ կատարեալ գաղտ-
նապահութեամբ ծածկած են ճշմարտու-
թիւնը, որուն երեւան չեղելուն մէջ իրենց
շահը կար արդէն:

Այդպէսով, երկու տարուան ընթացքի մը
մէջ, Ոստանիկ մի՛ միայն իրը գոհարեղէն՝
մօտաւորապէս մէկ միլիոն ֆրանքի արժո-
ղութեամբ աղբանք ձեռք անցուցած էր այլ
և այլ գոհարավաճառներէ, ու մասնաւորա-
բար հօթը վաճառատան տէրերէ՝ որոնց ա-
նունը, — իրենց վրայ տուած գումարներուն
քանակութեան հետ, — հետեւեալ կերպով
արձանագրուած է պատժադատ առեանի
վճարողին մէջ. —

340,000	Ֆր.	Պրունավիք
86,500	»	Տիւմա
150,000	»	Պատի
150,000	»	Բէյք
30,000	»	Հիւշէր
1,200	»	Այրի Մօպուր:

Այսպիսի արդէն իսկ կը գոյացնէ 762,700
ֆրանքի կլորիկ գումար մը: Տակաւին ատոր
վրայ պէտք է աւելցնել Վիեննայի ցուցա-
հանդէսէն դնուած գոհարեղէններու փոխա-
րէնը՝ որ իր կարգին կարեւոր գումար մըն է
և զոր Ոստանիկ չէ վճարած, ինչպէս նաեւ
ուրիշ ո՛չ նուազ մեծազին գոհարեղէններ՝
զորս չորթած է Կալէսի իշխանին գոհարա-
վաճառէն՝ Պ. Հօքօքէ: Դարձեալ, 50,000
ֆրանքի արժողութեամբ ձաքոնական առար-
կաներ ձեռք անցուցած է, ինչպէս նաեւ
20,000 ֆրանք արժող արծաթեայ սալաներ՝
զորս ապստղած էր՝ երեւակայական ամուս-
նութեան հէքեաթ մը հիւսելով: Պէտք է
յիշատակել հոս նաեւ 4,000 ֆրանքի արժե-
քով Օրլէանի երկաթուղւոյ պարտութեղ-
թեր զորս առած է Պ. Պուաւո անուն անձէ
մը... բնականաբար մէյ մըն ալ եւս չտալու
համար:

Այդ ահագին գումարներուն փոխարէն Ոս-
տանիկ հաղիւ 200,000 ֆրանք հատուցած է
վերոյիշեալ պահանջատէրերուն, որոնք ար-
դէն բնաւ չեն կտակածած իր վրայ: Ա-
նոնցմէ գլխաւորը միայն, Պ. Պրունավիք՝ որ
ամէնէն մեծ գումարը, 345,000 ֆրանք վը-
րայ տուած է, Ոստանիկի մէկ ճամբորդու-
թեան միջոցին սկսած է կատկածներ մնա-
ցանել, և Բաքիզ վերադարձած օրն իսկ ոս-
տիկանութեան զիմելով ձերբակալել տուած
է զայն: Աւանց այդ ձերբակալութեան
մարդը կարենար թերեւս իր գոհարեղէննե-
րուն արժէքը դանձել, որովհետեւ Ոստանիկ
Բարիզ վերադառնալէն քիչ ատան վեր-
պիտի ամուսնանար իր Բօրթուկալցի նշանա-
ծին հետ, և կամ աւելի ճիշդ պիտի ըլլար
ըսել՝ իր Բօրթուկալցի նշանածին միլիոննե-
րուն հետ: Անիկ ետքը, բնական է որ պի-
րով պիտի վճարէր իր պարտքերը, — ինչպէս
յայտարարած է արդէն դատաւարութեան

միջոցին : Պ . Պրունավիք անշուշտ զգլացած է այդպէս վարուած ըլլալուն համար,— թէ և չառ ուշ,— որովհետեւ Ոստանիկի դատաւա՛րութեամբ թէ՛ ինք և թէ միւս պահանջաւորները չեն կրցած ու եւէ հատուցում ստա՛նալ : Այդ մեծափարթամ բաղդախնդիրը՝ որ ոսկիի ու գոհարեղէններու մէջ կը լողար, որ շատ հեղ, հրաւիրեալներ ունեցած ատեն, չուայլ արեւելքցիի մը պէս ազամանդներով, մարդրիսներով կը վճարէր կերակուրին փոխարմէքը, նոյն իսկ չէ կրցած հայթայթել դատական ծախքերը, ինչպէս նաեւ այն 3000 Փրանքի տուգանքը՝ զոր պատժազանս ատենը սահմանած էր իրեն համար՝ հինգ տարուան բանտարկութեան պատիժէն զատ :

* *

Նախորդ յօդուածով մը ըսի թէ մինչդեռ Ոստանիկ Տէր-Մարգարեանց մէկ կողմէ բարեկամութիւն հաստատած էր Յրանապի ա՛մէնէն անուանի : գիտուններուն, գրագէտներուն և հրապարակագիրներուն հետ, միւս կողմէ ալ յարաբերութեան մէջ էր ժամանակին բոլոր նշանաւոր խարդախներուն հետ : Տեսնենք հիմայ թէ որո՞նք էին այդ համբաւաւոր խաբերաները, և թէ Ոստանիկ ու ա՛ննք ի՞նչ կերպով կ'օժանդակէին իրարու :

ՄԷՐՈՒՏԷՍ

ՇՈԳՄՈԳ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

«Տիկին Բիւմանքից Սուազօն, որ ասկէ երեք ամիս առաջ, Ռեվօլվերի հարուածով մը իր ամուսինը սպաննած էր, այս վերջնոյն գինեմոլութեանը եւ անկիրք վարմունքին ալ եւս չի կրնայ դիմանալուն համար, երեկ՝ պատժական ասեմին մէկ վնուգրով անպատճառ արձակուեցաւ» :

(ՖՐԱՆՍԱԿԱՆ ԼՐԱԳՈՐՆԵՐԸ)

Այս լուրը ինքնին շատ աննշան, հալիւ աչքի-դարնելիք, ունի սակայն իր մէջ ահազին փխրափայլութիւն մը որուն վրայ կ'արժէ անդրադառնալ :

Ամուսնական տուամիսը—որոնք շատ կը զտարճացնեն ամուրլիներու աշխարհը—այն

քա՛ն սովորական, այնքա՛ն հասարակ բաներ եղան որ, Տիկին Սուազօնի պարագան որեւէ կերպով չի կրնար հետաքրքրել հանրութեան ուշադրութիւնը, մանաւանդ որ ներկայ տը՛ւումը ա. բ. գ.ի պէս պարզ է և չունի իր sensationel կողմերը :

Ոչ մեղսակից կայ գործին մէջ—անխուսափելի սիրականը—և ոչ ալ հնարագէտ կանխամտածութիւն մը :

Առտու մը, թերեւս գիշեր մը—ինչդերը հոտ չէ—Տիկին Սուազօն, պզտիկ կուիւէ մը ետքը, բան մը որ ամուսնական յարկերու մէջ ընթացիկ դրամի դերը կը կատարէ, ձեռք կ'առնէ բարձին տակը գանուող զէնքը և թրա՛ք, անվրէպ հարուածով մը կ'ոչընչացնէ ամուսինը որ քիչ մը առաջ այդ միւսնոյն բարձին վրայ կը հանգչեցնէր իր ոգեկից գլուխը :

Պատմութիւնը երկայն չէ : Կինը կը ձերբակալուի, դատ մըն է կը սկսի և երեք ամիս ետքը, երգուեալ դատաւորները անպարտ կը հռչակեն Բլէմանթին Սուազօնը :

Ինչպէս տեսաք, գործին մէջ տարօրինակ բան մը չկայ :

Կին մը որ ամուսինը կը սպաննէ, էրիկ մը որ կողակիցը լաւագոյն աշխարհք մը կը զրկէ, այս ամէնը կեանքի մեծ տուածն անմիջապէս ետքը խաղացուած կատակերգութիւնն է . . . Խիս ծիծալաւոր, ինչպէս կըրնար որակել Միակեանի մէկ թատերական ազդարարութիւնը :

Եթէ ոչ Սուազօնի զէպքը, բայց գոնէ տրուած վճիռը՝ անտես անցուելիք իրողութիւն մը չէ և պէտք է կարելի եղածին չափ ուշադրութիւնը գրաւէ ամէն անոնց որոնք դատապարտուած են իրենց անկողինին բարձին վրայ ծերանալու՝ տարատես մէկու մը զլխակցութեամբ :

Մինչև երէկ ամուսնութեան դէմ ապահարդանը դրուած էր՝ ինչպէս անձրեւին դէմ հովանոցը, գողերու դէմ Միլնէրի դրամարկըղները, անդութեան դէմ Եանսօը, և բաժանորդագրութեան դէմ . . . օթլախճիյու՛թիւնը :

Այլեւս ատանկ չպիտի ըլլայ Յրանապի՛մէջ :

Ապահարդանը՝ տաղաւուկ, գլխու ցաւ և խել մը անպատեհութիւններ առաջ բերող մըջոց մըն էր ամուսնական կապը քակելու համար։ Հիմայ, չնորհլու Բարիդի պատժական ատենին տուած վերջին ցրոշումին — որ ժամանակակից պատմութեան մէջ իր տեղը պիտի ունենայ իբրեւ վճիռներուն ամենէն տարօրինակը — այլ եւս ո՛չ դատարաններու, ո՛չ կղերին գիմելու հարկ պիտի ունենան Բարիդահիները՝ իրենց գործին չեկած կեանակցի մը ձեռքէն օձիքնին ազատելու համար։

Վերջապէս ամուսնութիւններու ներկայ պայմանները բարեփոխութեան մը պէտքը զգալի կ'ընէին, այդ բարեփոխումը վերոյ յիշեալ դատարանին արձակած վճիռէն կը սկսի և որուն դէմ չեմ կարծեր թէ բողոքողներ և կամ դիտողութիւններ ընողներ գրտնուին Ֆրանսայի մէջ։

Ըստ իս՝ ամուսնութեան սեռովը դասուած է այլևս, սքարլաթինին, կեղծմաշկին և կատաղութեան սեռովներուն պէս։ Պիտի տեսնէք որքա՛ն պիտի շատնան ամուսնութիւնները Ֆրանսայի մէջ, առաջ՝ կարգուիլը վրտանդ մըն էր հոն։ Հիմա որ դարմանը գրտնուեցաւ, կարգուող կարգուողի Բարիդի մէջ։

* * *

Բարիդեան ամուսնութեանց վրայ խօսած միջոցիս՝ Պոլսական նշանաւորները միտքս կուգան, — այն նշանաւորները որոնց ցուցակը Պատրիարքարանը թերթերուն կուտայ մերթ ընդ մերթ։ Եթէ Պոլիս ըլլայի, շատոնց Պատրիարքարան գացած պիտի ըլլայի՝ Ս. Պատրիարքէն տառը վայրկենի ունկնդրութիւն մը խնդրելու համար։

Եթէ Նորին Սրբազնութիւնը հանդուրժէր որ իր ներկայութեանը ընդունուէի, գլխարկս հանելով ներս պիտի մտնէի սենեակէն և հանդիսաւոր *rèvérence* մը ետքը՝ սապէս պիտի խօսէի։

— Սրբազան, այցելութիւնս՝ նախ իմ որդիական յարգանքներս Ձեր Ամենապատուութեան մատուցանելու համար է և յետոյ սրգատիկ աղաչանք մը Ձեզ ներկայացնելու։

Կենցաղագէտ ինչպէս որ է Օրմանեան Սրբազանը,

— Նստէ նայինք, պիտի ըսէր։

— Սրբազան, աղքատ, չքաւոր աղջկաներու ի նպաստ դատի մը փաստարանութիւնը տանձնելու սրտոնքը սրտած է ինծի... զգացումներուս ամենէն նուրբին կողմէ։

— Յաւանականդ Քրիզանթէմ, նորէն աղջկի։

— Ձէ, Սրբազան, դրականութիւն ընելու եկած չեմ, ոչ ալ աշխարհիկ *causerie* մը ընելու Ձեր Ամենապատուութեան հետ։ Դուք որ ամէն բանի խելք կը հասցնէք և ոչինչ կը սպողի Ձեր հոգածութիւնէն, բան մը կայ սակայն որ վրիպած է զժրադժարար Ձեր ուշադրութիւնէն։ Վստահ եմ որ մէկ հրամա՛նով պիտի ուղէք վերջ զնու անպատեհութեան մը որ պարբարար կը կրկնուի Պատրիարքարանի մէջ։

— Լուրջ ալ ըլլալ դիտես եզեր, Քրիզանթէմ։

— Երբեմն, Սրբազան։ Կը ներէ՞ք որ ցաւս պատմեմ։

— Ցաւ ալ ունիս։

— Ուրիշներու հաշուոյն։

— Ըսէ՛ տեսնեմ։

— Սրբազան, այն ցանկը որ նշանաւորներու աւթիւ հայ թերթերու կը զրկուի, չեմ դիտեր թէ ի՞նչ տեսակ ծառայութիւն մը կը մատուցանէ հանրութեան։ Սովորաբար անցած գացածին վրայ չեն խօսիր խելօք մարդիկ։ Կը հասկնայի որ նշանաւորները հրատարակուէին ամուսնութիւններէն քանի մը ամիս առաջ, այնպէս որ գէտողութիւն մը ունեցողը ժամանակ ունենար զայն Ձեր Սրբազնութեան հասցնելու։ Բայց ըլլալէն ետքը, ի՞նչ բանի օգտակար են, ատոր խելքս չի համար։

«Այս պահուս սակայն զիս զբաղեցնողը այդ պարագան չէ, զոր իմ ձեռնահասութեանէս վեր կը գտնեմ և ինծի չի պատկանիր միջամտել ատանկի գործերու, հակառակ հրապարակաբի հանդամանքիս։ Իմ պաշտպանելու դամ զատու աւելի սրտի խնդիր մըն է քան դիւանատունի։

«Ինչպէս զիս Ձեր Սրբազնութիւնը խելօ՞, անտէր, երբեմն որը և միշտ զրկուած

աղջիկներ կան որ Ձեր հրամանով կը կարգուին: Դժբաղդ արարածներու համար ալ պաշտպան Աստուած մը կայ և աղքատ աղջիկներու համար՝ առաքինի amateurներ: Քանի մը դրուշով, ան ալ մութալով, պղտիկ, ափի մը մէջ սեղմելիք օժիտ մը կը պատարաստեն այդ խեղճերը և իրենցմէ աւելի բաղդաւորներէն գոնէ օր մը վար չի մնալու համար, կ'ընեն չեն ըներ ձեռմակ հարսանեկան չորագլուտ մը կ'անցընեն վրանին, չըրջաղդեստ մը որ ամէն առին մետաքսէ չէ:

«Արդ, Սրբազան», երբ այդ ողորմելի հարսուկը խորանին առջև կը ներկայանայ, — երկուստարդութիւնը այնքան շատ կ'երազէ — կը կարծէ թէ այսինչին աղջկան պէս ինքն ալ հարս կ'ըլլայ իոր չէնքով չնորձով: Պղտիկ ու բախտութիւն մը զոր անշուշտ շատ չէք գտներ իրենց համար, չէ՞, Սրբազան Հայր:

«Կը պատահի որ, — խեղաքիններ ալ կան անոնց մէջ — Պաակի սուրբ խորհուրդի միջոցին միտքը կու գայ որ չորս օր առաջ օրաթերութեան մէջ իր անունն ալ հրատարակուած էր փետին անունին հետ, ձրի բառը քովերին ի վեր: Ամբողջ Պոլիս, ամբողջ գաւառները այս պահուս դիտեն թէ կարգուող վարդուկը, Պէտգրիտը կամ Աղաւնին, էրիկ մը կ'առնէ իոր որ 10 զրուշ չունի խաչագին մը վճարելու համար: Եւ աղջիկներ կան որոնք կուլան իրենց հարսանեկան քօղին տակէն:

«Աղքատ ըլլալը շատ ծանր բան մըն է աղքէն՝ ներելու համար որ տանիքներու վրայ ալ պօսան թէ աղքատ ես: Ձրի կամ ոչ, չեմ գիտեր թէ ի՞նչ չափով հանրութիւնը կրնայ հետաքրքրուիլ այն ափուստութիւններով որոնց ցանկը Պատրիարքարանէն կը հրատարակուի ճիշտ այնպէ՛ս ինչպէս կը հրատարակուին մանածի և կամ ափիոնի առեւտրական bulletinները: Հանրութիւնը պէտք չունի գիտնալու թէ Մարկոսը և Կալինիկը քանի՞ դրուշ ստուած են նշանաւորութիւն համար:

«Պատրիարքարանի այդ հաշուետուութիւնը անպատեհ կը գտնեմ եւ հանրութեան համար և վերաւորիչ անոնց համար որոնք երկու աղքատ ձեռքեր իրարու մէջ կը դնեն:

«Տեսէ՛ք, Սրբազան, մեծ բան մը չէ խնդ-

րածս, ձրի բառին մէջտեղէն վերնալը, ուրիշ ոչինչ:

«Դուք որ աղքատներու վրայ կը դուրգուրաք՝ Ձեզի կը յանձնեմ այս դատին պաշտպանութիւնը և մանաւանդ կարգադրութիւնը»:

Օրմանեան Պատրիարքը այնքան բարի է որ, séance tenante Թէլեան էֆէնտին իր քով պիտի կանչէր և սապէս բան մը պիտի ըսէր անոր, գրաւ կը դնեմ:

— Թէլեան էֆէնտի՛, այսուհետեւ նշանաւորութեան հրատարակուած ցանկին մէջ սակազինները մի՛ դնէք, կը խնդրեմ. հարուստ, աղքատ զանազաններու պէտք չիկայ. միայն անուանները և արհեստները, ուրիշ ոչինչ:

ԳՐԻԶԱՆԹԻՍ

ԴԱԳԱՂԻ ՄԵ ՎՐԱՅ

Բաղմագդի ու յարգալի բաղմութեան մը յուղարկաւորութեամբ, նախորդ շաբթու կին մը յանձնեցին հողին: Ամէն աղք, ամէն կըրօնքի պատկանող անհատ ուղած էր իր ցաւակցութեան բաժինը բերել այդ կնոջ դագաղին շուրջը, և այդպէսով կազմուած էր մեռելական մեծվայելուշ թափօր մը՝ որուն ամբողջ ժողովուրդ մը սգակիր հանդիսատեսը եղաւ, և որուն հանդիսաւորութիւնը չեղտելու համար քիչ մը ամէն եկեղեցի իր զանգակներուն տխուր, ցաւազին գանգիւնը հնչեցուց: Մաղիկներ, պսակներ, մուգուս ու բեհեղ առատօրէն ցրցքնուած էին այդ դագաղին ճամբուն վրայ, և շողշողուն հագուստներով ծածկուած կրօնքի պաշտօնեաներ՝ ջահերու գալարուն լոյսին տակ, սգաբոյր մահերդ մը կը հիւսէին մեռնողին համար: Ճամբան՝ չորս դին սեւ գրկած էր, տուններ, պարտէզներ, լապտերներ, հանրային հաստատութիւններ սղաւորուած էին վերէն վար, և ամէն հասակէ, ամէն սեռէ բաղմութիւն մը իր ըմբռնած կերպով կը մասնակցէր այն յարգանքի արտայայտութեանց՝ որոնք դադարը կը չընկալուէին:

Շատեր այդ բաղմութենէն՝ զմայլելի օթոյներու, ծանրագին բեհեղներու և ար-

ծաթեայ դրուագներով չողջողուն պատկերում շուրջ փռած էին անոր առջև, մինչդեռ ուրիշներ, — ինքնին ո՛չ նուազ բազմաթիւ, — կիներ, աղաք ու աղջիկներ՝ որոնք սրտերն էն զատ ուրիշ բան չունէին նուերելիք, իրենց արցունքներով կ'օծէին այն արահետը՝ ուրիշ ընդհանուրէն սիրուած, յարգուած այդ կինը դէպի իր վերջին հանդատարանը կ'առաջնորդուէր։ Եթէ ատիճանաւոր անձեր ու գիրքի տէր մարդիկ եկած էին անոր յարգանք ընծայելու, այլի կիներ, անոր աղաք, աղքատներ ու չքաւորներ ալ չարք կազմած էին ճամբուն երկու կողմը, վշտաբեկ գլուխնին խոնարհած իրենց կուրծքին վրայ, ամէնքն ալ տողորուած իրական ցաւով մը։ Առասպելային ժամանակներու պատկանող դիցուհի մը կարծես՝ զոր մեռելական հանդէսով մը իր պաշտամունքին յատկացուած սրբավայրը կ'առաջնորդէին։

Եւ իրապէս ալ դիցուհի մը եղած էր այդ կինը, դիցուհի մը Գաթի, Կարեկցութեան և Սիւփանքի, դիցուհի մը վերջապէս՝ որ սքանչելապէս կը մարմնացնէր ժամանակին մարդկութեան կողմէ ամէնէն սիրուած, ամէնէն յարգի առաքինութիւնները։ Աղքատը որ իրեն կը դիմէր՝ կտորած սրտով ետ չէր դառնար, անանկը որ իր դիմարտութեան կ'ապաւնէր՝ յուսաբեկ չէր մեկներ։ Ու դարձեալ այդ կինն էր որ չքաւորին պարէնը կը հողար, որբերուն համար գործաւոր մայր մը կը դառնար, այլի ու անապաւն կիներուն արցունքները կը սրէր, և մարդկօրէն կուրելի ամէն բան կ'ընէր՝ մեղմելու համար վիշտն ու ցաւը անոնց՝ որոնք անժառանգներ մնացած էին։

Բազդը իր չնորհներէն չէր զրկած զինքը։ Հարստութիւն, գեղեցիկութիւն, վերջապէս ամէն բան ունէր, բայց փոխանակ իր նմաններուն պէս այդ չնորհները անախառնութեան դործիքներ դարձնելու, պարկեշտօրէն ամփոփուած էր իր անարար կնոջ խեղճին մէջ, տարածելով չնորհալի սանտիկնոջ համբաւ մը որ երբեք չէ գայելած։ Մինչդեռ հարուստութիւնը կարգ մը կիներու ձեռք տեսակ մը միջոց կը դառնար մարդկային ունայնատու-

թեան ամէնէն ծիծաղելի տեսարանները պարգեւ, ինք անով թշուառութիւններ կ'ամուրէր, կարօտութիւններ կը արօղէր։ Եւ, անօրինակ բան, իր բարեգործութիւններէն ո՛չ մէկը փողով թմբուկով կը ծանուցանէր։ Շնորհալի ըլլալուն չափով համեստ, երբեք չէր ուղեր ազմուկ հանել իր բարեգործութեանց շուրջը։ «Այլիդ պարգեւածը պէտք չէ որ ձախդ տեսնէ», բոսած է Գրիորոս, ու չեմ գիտեր թէ ո՞վ իրմէ աւելի կը հետեւէր այդ աւետարանական պատուերին։

Ատկէ՝ այն պատիւն ու յարգանքը որ միշտ չըջապատած էր զինքը, ատկէ՝ այն ընդհանուր համարումը որ անցեալ կիրակի օրուան յուզարկաւորութեան միջոցին արտայայտուեցաւ անխտիր ամէն մարդու կողմէ։ Ատկէ՝ նաեւ այն խոր վիշտն ու սուգը որ այս պահուստ առաւանած է բոլոր անոնց վրայ՝ որոնք զինքը ճանչցած են և կամ իր համբաւը լսած։

Այս կինը, որուն նման չատ քիչեր ունեցած ենք, հարկ կ'աշ անուանելու, վաղեմութիւն Տիկին Վերմին Պ. Կիւլպէնկեանն էր։

* *

Բնազդը ուրիշ չնորհ մըն ալ պարգեւած էր իրեն։ Գիթալիտ, առաքինի և ազնիւ կին՝ ունեցած էր ամուսին մը նոյնչափ և աւելի ազնիւ, առաքինի ու զթաւիրտ։ Յաճախ երկուքը մէկմանց ծրագրիւր յղացած էին սա կամ նա բարի գործին, և մէկը ինչ որ բրած էր դիմարտութեան անուանով՝ վստահ էր թէ միւսին հաւանութիւնը պիտի ունենայ իրեն քաջալեր։ Քիչ քնտանիքներու մէջ միայն այս զմայելի համբերաշխութիւնը տիրած է երբեք, մանաւանդ բարեգործութեան պէս զգացումի մը մասին՝ որ գծրազգարար բոյն չէ դրած մեր հարուստ դատակարգին պատկանող ընտանիքներու մեծազոյն մասին սրտին մէջ։

Այդ անտաղիստ աւուսինը անձանոթ մը չէ՝ մեր համայնքին համար։ Ո՛չ թէ միայն բազմաթիւ բարի ձեռնարկներու գլուխը դնուած է, — յաճախ նոյն իսկ առանց անունը յայտնելու, — այլ նաեւ տեսակ մը ժառանգական իրաւունքով այսօր զլիխաւոր վարիչն է մեր այն միակ հաստատու-

թեան՝ ուր ամենէն աւելի թշուառներ կը պատապարտւին, ուր մարդկային ցաւերուն, մարդկային վիշտերուն ամենէն մեծերը կ'ընդունուին դրկարաց, ուր այնչափ անկարներ, այնչափ անկեալներ ու կարօտներ կը դիմեն սպաւէնի մը համար: Սրտով մաքուր, բարի ու անշահախնդիր, այն հազուագիւտ անձերէն եղած է մեր մէջ՝ որոնք բնաւ չեն բամբասուած: Զաւակը բնատնիքի մը՝ որուն այնչափ անդամները հանրութեան աչքին երախտաւորներ դարձած են, հաւատարի՜ մնացած է այն վեհանձնութեան աւանդութիւններուն՝ զորաւր հախորդները թողած են իբր յիշատակ:

Աւելի գեղեցիկը կայ: Մինչդեռ ուրիշ այնչափ ծանօթ բնատնիքներ այսօր բոլորովին չքացած են իրենց վերջին շառաւիղներուն ապկարութեան, ծուլութեան պատճառաւ, մինչդեռ աշխատութեան, արժանիքի վրայ հիմնուած գերդատուաններ այսօր իրենց շառաւիղներուն վաղթարութեան պատճառաւ հետք մը անդամ չեն թողած, կիւլպէնկեանց գերդատուանը հետզհետէ բարձր վիճակի մը հասած է, հետզհետէ աւելի կարչնեղ արմատ մը բռնած է մեր մէջ, ու շահած է համբաւ մը՝ զոր կազմող ծաղիկները չեն գիտցած բնաւ խամրիլ: Սերունդէ սերունդ, այդ բնատնիքին անունը աւելի խոր հետք մը թողած է մեր մէջ, սերունդէ սերունդ այդ բնատնիքը միշտ երախտագիտութեան աւելի մեծ, աւելի նուիրական առարկայ մը դարձած է ժողովուրդին աչքին: Ինչ յարգանք, ինչ պատիւ որ կը մատուցուէր ասիէ՝ առաջ կիւլպէնկեաններուն, այսօր կրկնապատկուած է Պատրիկ Էֆէնտի կիւլպէնկեանի համար, և անհիմն չէ հետեւցնել թէ վաղը միւս օր պիտի եռապատկուի, պիտի քառապատկուի:

* * *

Ասոր համար է արդէն որ, մեր Հիւանդանոցին շրջափակին մէջ, գերեզմաններով խճողուած պղտիկ անկիւն մը այսօր կտաւրեալ սրբալայր մը դարձած է ժողովուրդին համար: Այդ սրբալուկ անկիւնը առաջին ակնարկով աչքի չի գարներ: Ո՛չ շողշողուն մարմարներով պշտուած է, ո՛չ ալ շքեղ շքեղ շափակով մը: Ծաղիկներ միայն կան հոն,

աղուոր, նախշուն ծաղիկներ՝ ցրցքնուած համեստ հողակոյտերուն շուրջն ու վրան: Երկաթեայ պարզ վանդակորմ մը շրջանակած է այդ անշուք հողի տարածութիւնը, և յիշատակարան մըն ալ չկայ որ յայտնէ թէ ինչո՞ւ հոն աւելի խնամով կը մեծանան ծաղիկները, թէ ինչո՞ւ հոն կանանչը աւելի աղուոր կը բացուի:

Անձրեւը, ձիւնն ու բուքը այնչափ տարիէ ի վեր կ'եղծեն այն արձանադրութիւնները՝ որոնք ժամանակ առաջ դրուած պատկերու վրայ դրուած են: Բայց ի՞նչ օգուտ ասիէ: Անձրեւն ու ձիւնը տակաւին կրնան եղծել ունոյն իսկ բաւորովին քննել հոն գտնուող ամէն արձանադրութիւն: Կրկին ան որ Հիւանդանոց կը դիմէ՝ պիտի գիտնայ թէ որո՞նց գերեզմաններն են այդ պարզ շրջափակին մէջ պարփակուածները: Հոն այլի կիներ իր որբերուն ձեռքէն բռնած՝ միշտ պիտի երթայ պուտ մը աղօթք կարդալ՝ ճակատը խոնարհեցուցած երկաթեայ վանդակորմերուն վրայ, և այնպէս մանեղ եկեղեցի: Հոն աղքատը խաչ մը պիտի հանէ միշտ, հոն անանկը հանգստեան մաղթանք մը պիտի բնէ, և մինչդեռ հաբուսներն ու դիրքի տէր մարդիկը յարգանքի խոնարհումով մը պիտի անցնին այդ հողակոյտերուն առջեւէն, միշտ պիտի գրտնուին զրկեալներ՝ սրունք անոր առջեւ ծունկի եկած՝ իրենց երախտագիտութիւնը պիտի երգեն արցունքով օծուած աչուքներով:

Որո՞ւ հող ձիւնն ու անձրեւը: Որո՞ւ հող արձանադրութեանց եղծումը: Ոչ ոք հոն արձանադրութիւն վնասուելու կ'երթայ, ո՛չ ոք հոն կիւլպէնկեաններուն գերեզմանը խրնկելու համար յիշատակարաններ կ'որոնէ: Մեր գերեզմանատուներուն մէջ որչափ գեղաւիկրտ ամփոխարաններ ունինք, որոնք իրենց յգիւում մարմարին գուռողութիւնը կը ցցեն սակեզօծ պտտուանդաններու վրայ: Ոչ ոք սակայն կ'երթայ ծնրալրել այդ գերեզմաններուն առջեւ, ոչ ոք, —նոյն իսկ աղգական մը— կ'երթայ քիչ մը արցունք թափելու անոնց գեղաչէն շրջափակին դէմը:

Ո՛ր էր թէ մեր հաբուսները, հոյաչէն ու շքեղ յիշատակարաններ թողելէ աւելի

աղուոր համբաւ մը, և բարեգործի յիշատակ մը ձգէին մեզի: Անձրեւն ու ձիւնը՝ տարիս ներու ընթացքին մէջ կրնան նոյն իսկ քաւերը եղծել և աւել աւելն արձանագրութիւն, որչա՛փ ալ ոսկեղօծ փորագրուած ըլլայ: Բայց աշխարհի մէջ ոչ մէկ բան երբեք կրնայ ջնջել մաքուր համբաւ մը և աղուոր յիշատակ մը:

ՄԷՐՍԷՏԷՍ

ԱՅԾԵՄՆԻԿԻ ՓՈՒՆՁԸ

(Le bouquet de chevreuilles)

ՎԷՊ ԱՆՏՐԷ ԹԵՕՐԻԻԷ

Թ. 6.

Պատերուն երկայնքը չնչին անօթիկներով խառնուած դարակները կը յիշեցնէին սակայն սիրուն յիշատակներ, ապակեայ թելէ արձանիկներ, գունաւոր շաքարեղէններու տուփեր, ասեղնագործութեան յատուկ Սքայի փայտէ արկղիկներ, ձեռքով հիւսուած բոյրերու յատուկ քսակներ: Անկիւն մը երկար աթոռ մը, քովը միոտանի մը որսն վրայ բաց կեցած դեղին երեսով վէպ մը ցոյց կու տար այն տեղը որուն նախապատուութիւն կու տար տանտիրուհին:

Զննութիւններս լինցունելու մօտէի, երբ թեթեւ ոտնաձայն մը լսեցի յարակից սենեակէն որ ննջասնեակ ըլլալու էր և որուն դուռը կխաբայ կ'երեւար: Գրեթէ նոյն վայրկենին Տիկին Տարսիլ երեւցաւ այս դուռն ըտցուածքին մէջ զոր խնամով փակեց իր ետեւէն: Ժպտեցաւ չրթունքներուն ծայրովը ու ներողութիւն խնդրեց զիս սպասցնել տալուն համար. յետոյ, նստելով իր սիրուն տեղը, իր երկայն աթոռին ճիշդ ծայրը դըրուած փոքրիկ աթոռակ մը ցոյց առաւ ինծի:

—Նստեցէք հոն, աւելցուց, ու պատմեցէք թէ ինչպէ՞ս անցուցիք օրերնիդ:

—Զեր վրայ մտածելով, պատասխանեցի տակնուվրայութեամբ մը:

—Հա՛, հա՛, գրասանակի գործերը ուրիշ բանի վրայ մտածել կու տա՞ն... տես

նենք ի՞նչ մտածեցիք իմ վրաս: Ով որ շատ կ'ըսէ, բան մը չըսեր, յարեց ուսերը ցնցելով, ապահով եմ որ սրտով զիս պչրասէր ու անհաստատ կին մը կը կարծէք... Այո, Շարուի մէջ ինծի համար այսպէս կը խօսին, և եթէ քիչ մը համարձակախօս ըլլաք՝ պիտի խոստովանիք անշուշտ ինչ որ ըսուած է ձեզ ինծի նկատմամբ:

—Հոս ոչ զոք կը ճանչնամ, կրկնեցի խուսափողաբար:

—Բայց կերակուրը պանդոկը կ'ուտէք, ապահովաբար ձեր սեղանակիցները շաղակրատած են ինծի համար:

—Ոչ, դէթ ոչ իմ առջեւ...:

—Շատ լաւ, կրկնեց, կը տեսնէք, երեւոյթէն պէտք չէ դատել մարդը ո՛չ ալ հաւատալ չարամիտներու տուտ ու փուտին: Լուրջ տղայ մը կը նկատեմ ձեզ, ու առջի եկած իրիկունէիդ ինծի վստահութիւն մը ներշնչեցիք... համարձակօրէն կ'ըսեմ այս ամէնը, որովհետեւ ձեր պաշտօնակիցներէն մէկուն կ'ընէ ըլլալով կ'ուզեմ իբրեւ ընկեր վարուել ձեզի հետ...:

—Իբրեւ բարեկամ վարուեցէք ինծի հետ, դռնցի, երկայն աթոռին առջեւ ծնրադրելով, ինձմէ աւելի անձնուէր մէկը չպիտի ունենաք քովերնիդ:

—Լաւ, իբրեւ բարեկամ, պայմանաւ որ դադանապահ բարեկամ մը ըլլաք, ու աւելի յարգալից քան այս առտու... խոստացէք ասիկայ, պարոն: Ի՞նչ է ձեր մականունը:

—Մարտէլ:

—Նշանաւոր անուն՝ անուշ արտասանութեամբ:

—Իսկ ձերի՞նք, հարցուցի իմ կարդիս

—Անունս Լիւսիէն է, բայց մանրօրէն Լիւս կ'անուանեն զիս, աւելի կարճ. աղէկ չէ:—Լիւս, կրկնեցի փափկօրէն, որչա՛փ պիտի սիրեմ այդ անունը.—Պէտք չէ միայն անունը սիրել, պարոն, պէտք է սիրել նաեւ անձը:—Արդէն կը սիրեմ դայն:—Բայց սիրել ըսելով կը համկնամ ճշմարիտ սէրը, խելօք, առանց արտաուայ կարծիքներու, առանց մտածելու ազեղութեանց վրայ... կը խոստանամ:—Ոչ թէ կը խոստանամ, այլ

կ'երդնում:—Շա'տ լաւ ուրեմն, մըմուաց իր զգլխիչ ժպտողը, տուր ձեռքդ, պայմանագրութիւնը կնքուեցաւ, այնպէս չէ՞:—Ձեռակերպութիւն մը միայն կը պակտի անոր մէջ, զիտեղ տուի, ձեռքերը ձեռքիս մէջ պահելով ու համբոյրներով ծածկելով զանոնք, Լիւսա, Լիւսա, ո՛րքան կը սիրեմ զքեզ:

—Է՛հ, լաւ, յանդիմանեց՝ մատները ետ քաշելով ու խիստ ակնարկ մը նետելով վըրաս, ա՛ն է խելօքութիւնդ:

—Ի՞նչ մնաս կայ ձեռքի վրայ դրոշմուած խելճ ու կրակ համբոյրէ մը:

—Սկզբնաւորութիւն մըն է, պարոնիկս, ու ետքը առաջքը չ'առնուիր, կամ դէթ, յարեց, ետքէն առաջքը չը պիտի առնուէր, եթէ ես, կարծածնուն պէս, անհաստատ կ'իմ մը ըլլայի... Բայց միտքս դրած եմ լաւ կարգադրութիւն մը ընել այս մասին... Ահա կանխաւ կ'իմացնեմ քեզ, առաջին անպատեհութեան՝ պայմանագրութիւնը չեղեալ պիտի համարուի ու հրամեշտ պիտի տամ ձեզի:

Աղաչանքով պաղատանքով ստացայ իրմէ ձեռքը համբուրելու թոյլտուութեան չը նորէքը, բայց Լիւսա մեծ երգում մը ըրաւ թէ ուրիշ աւելի բան մը չպիտի նստանայի երբեք ու ասոր մէջ պիտի տանջանալիակուէին թոյլտուած ընտանութիւնները: Յետոյ, իր ամէնէն հմայիչ ժպտով ստիպեց զիս ոտքի ելլել, խոստացաւ նաեւ որ յաջորդ օրը պիտի ընդունէր զիս նոյն ժամուն ու զիս համբեց, առաջուքնէ հարկը անգամ աւելի գրգռուած, աւելի սիրահար և խելայեղ վիճակի մը մէջ: Ձիս գէպի գուռը առաջնորդած պահուն մատը իր հրապուրիչ շրթունքներուն վրայ դնելով պատուիրեց որ բոլոր ասոնք զաղանի մնան ու յիշեցուց նաեւ որ որոշուած ժամէնէն դուրս այցելելու ջանադիր չըլլամ:

Գիշերուան մնացորդը ու յաջորդ օրուան առաւուն խիստ վհատեցուցիչ դանդաղութեամբ անցաւ: Ժամանակը սպաննելու համար՝ լքուած աշխատութեանս լուծին տալի նետեցի ինքզինքս: Բայց եկեղեցիին զանգակը չորս հնչածին պէս, գրտակնեակս գոցեցի ու քիչ մը արդու-զարդիս խնամ տանելով կամացուկ մը անցայ. դողդոջուն տիկին

Տարվիլի յարկաբաժինը: Երբոր սպասուհին զիս ներս մտցուց, Լիւսա դտայ իր սովորական տեղը: Մինակ կապոյտ շրջազգեստը փոխած էր և պայծառ ու աւելի լայն ծալքերով շրջազգեստ մը հագած էր: Անոր լայն թեղանիքը ժապուէնի հանգոյցով մը վեր առնուած կը բանար մինչև արմուկը իր մերկ դատտակները որոնք քիչ մը թուխցած էին հարաւային հովէն: Լաւ չյարգարուած այս արդու-զարդը զինքը աւելի կը նրբացնէր, աւելի ծփուն վէտովէտումներով կը լեցունէր ու աւելի հրապուրիչ կ'ընէր: Չարածճի զըլուիւր վերցուց հմայիչ՝ համակ դանդաղեղ փոքրիկ ծոպերով, ու դրաւ ասեղնադորձը մ'իտտանիին վրայ:

—Լա'ւ, աւելի խելացի ըլլալ որոշեցի՛ր աստ ատապէս:

—Կարելին պիտի ընեմ, պատասխանեցի չկեղծաւորաբար:

—Ուրեմն, ըսաւ, ցոյց տալով երկայն աթոռին ծայրը, հրամեցէք նստեցէք հոտ... հիմա խելօք ըլլանք, խօսակցինք ազնուօրէն, ըսէ նայիմ քաղքին մէջ ի՞նչ կ'անցնի կը դառնայ:

—Քաղքին մէջ ի՞նչ կ'անցնի կը դառնայ, իմ ի՞նչ հոգս: Լիւսէն դուրս բան մը չի հագրդուեր զիս, ես կ'ապրեմ իմ սիրոյս մէջ իբր թէ ապրած ըլլայի չէղոքացած մթնոլորտի մը մէջ, ու բան մը չեմ գիտեր բոլորիքս անցած դարձածէն:

Խոստովանեցայ համարձակ ու ջանացի հաճողել զինքը, թէ բոլորովին իրեն կը վերաբերէի, իրմով կը զբաղէի: Անկէ անդին բան մը զիս չէր շահագրգռեր: Բաւական է որ կարենայի զինքը տեսնել ու խօսիլ իր հետ: Հասկցայ նաեւ որ ինքն ալ ինձմէ աւելի չէր խառնուեր մանր մունր անցքերուն որ փոքրիկ քաղաքներու ընտկիչներուն կեանքին մէջ մեծ տեղ մը կը բռնէին: Եթէ սիրոյ արտայայտութիւններս զայն կը զբօսցունէին պահ մը, քաղքին բանբասանքները աւելի մոտայիւր ըրած կ'երևային զինքը: Ջանացի մեծարանքներ չուայել իրեն: Դիւրազգած էր, յօժարակամ մտիկ կ'ընէր խօսքերուն: Սէրը լեզուս կը բանար որ չէր ցամքեր երբեք: Գեղեցկութիւնը ու շնորհ հռչակելու մէջ

այնքան քնարերգական եղայ որ խիտ խանդավառեցաւ ու մրմնջեց՝ չնորհալիօրէն մտահերք ընդնիս վրայ դնելով .

— Էւէ՛ , քաղցրաբանութիւններդ վերջապէս զիս անապարձ ու ետտէր պիտի դարձնեն :

Ձեռքը բռնեցի , զայն սեղմած պահեցի շրթունքներուս վրայ , յետոյ այս առաջին փայփայանքը անորժակս բանալով՝ համբուրեցի աիւր ու բազումները : Ուղեց սրդողիլ , պոռայ թէ կը թերահամ խոտամանս մէջ , կ'արգարայնէի ինքզինքս ցոյց տալով անոր որ ձեռք ու բազուկ միւսնոցն անդամն են ու ասանկով պայմաններուս ստամանին մէջ կը մնայ :

— Ես գիտեմ , կրնեսց չարածճի ժպիտով մը , այսօր կ'ըսէք որ տամ բազուկս , վաղը պիտի պահանջէք ուրիշ բան մը որուն համար պիտի փորձէք փաստել թէ անվնաս գործ մըն է . . . վստահութիւն չըլլուի՞ր ձեզի ու սխալեցայ այդքան մօտիկ քովիկս նստեցնելով :

Բայց ասանկ գեղեցիկ քարոզներ չէին յաջողեր վախցնել զիս . իր թարմ ու սեղմ մարմնոյն շօշափումովը զիւնէ կ'ըսէ , փաթթուած էի իր նուրբ հասակին ու կը համբուրէի արգէն շրթունքովս ուսերը ու մերկ պարանոցը : Մէկդի հրեց զիս ու զայրացած շարժումով մը ոտքի կ'ընկնէ .

— Կորսուէ՛ , հրամայեց , աթու՝ մը ասես ելալ հանդարտ նստէ , եթէ ոչ՝ պիտի ստիպուիմ վնասել զքեզ : Տեսնուած բան է աս , իրաւ խենթ մըն ես կ'զեր դուն :

Խենթեցած ամբողջովին , ցնորած էի , բայց նաեւ խիտ ալ անսիրտ , իրաւ կը կարծէի իր բարկութիւնը ու իր ընդդիմութիւնը : Վախցայ որ զիս ճամբու չղնէ , ու անմիջապէս ծնրադրելով ներողութիւն խնդրեցի յանդգնութեանս համար : Ծաւա խոնարհեցայ , համակերպեցայ , որպէս զի բարկութիւնը իջեցնեմ :

Վերջապէս մեղմացաւ , հրամայեց նորէն քիչ մը նստուն նստիլ , յետոյ ինքն ալ տեղը նստաւ նորէն : Երկու բաղէ լուսն մնաց , ինք մնաց զէմքով , ես բոլորովին շփոթած , չգիտնալով ինչպէս պիտի վերսկսէի խօսակցութիւնը :

— Մի՛ ծուեր դուխդ , դուչեց . . . Ասիկա ինձի դաս մը կ'զու : Պէտք էր մտածել թէ մարմինը տկար է , հետեւաբար պէտք չէր փորձանքի ենթարկել քովինդ : Էն սնմեղ դուրդուրանքներու կը յաջորդեն ուրիշներ : Ասիկա կը յիշեցնէ ինձի մանկութեանս մէկ միջադէպը : Օր մը զիս կողով մը կ'ըսէին հետ ասանձին թողած էին , հաս մը առի խոտամալով որ ա՛յ չուսեմ , ելալը այնքան համեղ էր որ անորժակս սրտեցաւ . . . ուրիշ մը առի , յետոյ երրորդ մը , ասանկով քարոզեցի կողովը : Եթէ չզգուշանայի հիմա , միւսնոցն պիտի պատահէր ձեզի ձեզի ալ . . . Միայն թէ չեմ ուղեր . . . և պիտի զգուշանամ :

(Շարունակելի)

ԺԱՄԱՆՅԻ ԲԱԺԻՆԸ

ՋՈՒԱՐՃԱՆԻ ԲԺՇԿԱՐԱՆ

Բժիշկին երեք նշանաբաններն են .

1. Երբեմն բժշկել , 2. յաճախ օրհնել , 3. միշտ միտիմարել :

Հիւանդանոցին մէջ

Բրօֆէսօրը հիւանդին ուղղելով խօսքը

— Ի՞նչ է ձեր արհեստը , բարեկամս :

Հիւանդը՝ որ կուրծքի հիւանդութենէ մը կը տուռապի

— Նուաղածու , պարոն ուսուցիչ , կը ստառխանէ :

Ուսուցիչը իր աշակերտներուն

— Վերջապէս , պարոններ , դարձեալ ամփոթէն օգուտ քաղելով՝ դատարանին մէջ շատ անգամներ կրկնածս կը հատառեմ ենթադրելով վրայ , երաժշտական գործիքներու մէջ վիշելու համար չնշառութեանս գործարանը յոգնութիւնը միակ պատճառն է այս մարդու թուրքային հիւանդութիւն մ'ունենալուն :

Յետոյ հիւանդին դառնալով՝

— Ի՞նչ գործիք կը նուազէիք :

— Խոշոր . . . Թմբուկ մը , պարոն ուսուցիչ :

Բժիշկի մը հիւանդի մը քով կը կանչուի

— Ի՛հ Տիկին , կը դռնէ բժիշկը հիւանդի

ՅՈՒՇԱՏԵՏՐ

կնոջ դառնալով, շատ ուշ կանչեցիք զիս, ձեր ամուսինը կորսուած է... տեսէ՛ք, արդէն ձեռքերը կապուածացած են :

— Բայց, Տօքթօր, չէ՞ք դիտեր որ ամուսինս ներկարար է :

— Է՛հ ուրեմն, լաղղաւոր էք Տիկին, եթէ ներկարար չըլլար՝ մինչեւ այժմ մեռած պիտի ըլլար :

Հիւանդին իր բժշկին վրայ ունեցած վրասահութիւնը կը բժշկէ նոյնքան՝ որքան նոյն իսկ բժըշկութիւնը :

Դիտելնէսին հարցուցեր են թէ ժամը քանիին պէտք է ձաշել :

— Եթէ հարուստ էք՝ պատասխաներ է, ձաշեցէք երբ որ ուզէք, իսկ եթէ աղքատ՝ երբոր կարենաք :

Կեանքը շողեկաւոր մըն է, տարիները՝ կայարանները, մահը՝ վերջին կայանը և բժշկիները՝ ... շողեկաւորին հնոցպանները :

ՄԵԿ ՔԱՆԻ ԲԱՌԵՐ ՈՒ ՄԵԿՆՈՒՅԻՆՆԵՐ

Շոգոյա. — Մենդարար խմոր մը որուն մէջ ամէն բան կայ... մինչեւ անդամ քաքաց :

Բաղնիք. — Կանխող դարման մը մաքուր անձերու համար և բուժիչ զեղ մը՝ աղտոտներու համար :

Ախոյ. — Համաճարը անսոյց որոնք զրկուած են անկից և հանճար ունեցողին մահը :

Կոնակ. — Սովորութիւն եղած է ըսել՝ ձեռքը կոնակին ետեւ դրած : Բայց կոնակին ետեւը փոքն է. ասիկա մի՛ մոռնաք :

Յղութիւն. — Մարդասիրութիւն և զգլում :

Արցունք. — Հոգիին արիւնը :

Բժիշկ. — Դիտուն, զօրեղ, փրկարար հրեշտակ մը՝ երբ իրեն զիմարները հիւանդ են : Տգէտ մը՝ երբ կ'առողջանան :

Դիտուն. — Մարդ մը որ բաւական ուսած է իր չգիցածին խղճահարութիւնը ունենալու համար :

Դիտութիւն. — Բացառիկ զինն մը. որքան զայն կը խառնեն՝ այնքան մաքուր է :

Պանիր. — Եթէ առաւօտուն ուտէք ոսկի է, ցերեկը՝ արծաթ, իսկ զիշերը՝ կապար :

Մ. Կ. ՄԱՆՈ

Ս. Հայրապետք՝ երկու ուրոյն Կոնդակներով արքեպիսկոպոսութեան առօրձան չընորհած է Կրօն. Ժողովի դեր-ատենապետ Տ. Վահրամ Մանկունի Սրբազանին և Նիկի-միդիայ առաջնորդ Տ. Ստեփաննոս Սրբազանին : Այս Կոնդակները Պատրիարքարան ուղղուած ըլլալով, Ս. Պատրիարք Հօր կազմէ չնորհաւորական գրերով զրկուեցան յիշեալ արքեպիսկոպոսներուն :

Ուրժալի նախկին առաջնորդ հանդուցեալ Տ. Խորէն Կալիսկ, Միթիարեանի հրատարակուած հեղինակութիւններուն թիւը կը հասնի 10 հատորի. թողած է նաեւ երեք անտիպ երկասիրութիւններ :

Մայր Աթոռի տպարանէն ի լոյս ընծայուելիք գրարար «Աստուածաշունչ»ի առաջին ապագիր պրակէն, որ կը պարունակէ Ծննդոց 24 գլուխները, 15 օրինակներ զրկուած են Պատրիարքարան : Այս տպագրութիւնը արդիւնք է 16 ձեռագիր և զրչագիր օրինակներու քննութեան և բաղդատութեան, ինչպէս յայտնուած է յառաջարանին մէջ : Ս. Պատրիարքը այդ նիւոյնները զրկեց ձեռնհաս եպիսկոպոսներու և հայ լեզուի ու բանասիրութեան մասնագէտներու որպէսզի իրենց կարծիքը յայտնեն :

Երուսաղէմի Լուսարարապետին ընտրութիւնը, զոր ծանուցինք երկու չարաթ առաջ, կատարուած է Միարանական Ժողովին յունուար 20ի նիստին մէջ, Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ և մասնակցութեամբ 45 անդամներու : 4 բացակայ միաբաններ ալ իրենց քուէն զրկած էին գրաւորապէս : Պաղտատի Պատր. փոխանորդ Տ. Գաբրիէլ վրդ. Ասյնեան 49 քուէարկուներու 23ին քուէալը ընտրուեր է Լուսարարապետ Երուսաղէմի :

Խառն Ժողովը նիստ ըրաւ. չորեքշաբթի օրը Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Վսեմ. Գաբրիէլ Էփ. Նուրատունեանի և զրադեցաւ յարաբերական ինդիքներով : — Ս. Նախագահը Ժողովին հա-

գորգեց Կիլիկիոյ նորընտիր Կաթողիկոսին իւրեն ուղղած մէկ գիրը, որով Վարչութեան անակցութիւնը կը խնդրէր իր պաշտօնին կիրառմանը ու յաջողութեանը համար: Ժողովը յայտարարեց թէ պատրաստ է առ այդ:— Ժողովականներէն Տիգրան էֆ. Տէր Ներսէսեան յայտարարելով թէ քանիցս հրաժարական մատուցած է Պատրիարքարանի Ա. գործակատարի պաշտօնէն թէ՛ Ս. Պատրիարք Հօր և թէ՛ Վարչութեան, կրկնեց և խնդրեց որ ընդունուի: Ժողովը փափաք յայտնեց որ Տէր-Ներսէսեան էֆ. ժամանակ մը ևս չարունակէ իր պաշտօնը, մինչև յաջողին ընտրութիւնը: Այս առթիւ ժողովը հանգստեան կոչեց գործակատարի օգնական Յարութիւն էֆ. Գասպարեանը՝ իր ծերութեանը պատճառաւ, և հանգստեան պատշաճ թոշակ մը սահմանեց անոր:

Ս. Էջմիածինէն մէկ քանի սարկաւազներ այժմ կ'ուսանին Ռուսիոյ զանազան Համալսարաններուն մէջ: Ասոնցմէ Բեդերսպուրկի Համալսարանին ուսանող Սմբատ սարկաւազը նոյն Համալսարանի վարչութիւնը անցեալ ամառ զրկած էր Պարսկաստան զանազան գիտական հետազոտութիւններ կատարելու: Սարկաւազը Բեդերսպուրկ դարձաւ այս ձեռքով, քանի մը անտուկ լեցուն հոսթիւններ բերելով իր հետ, և այս առթիւ կազմեր է մանրամասն ցուցակ մը Պարսկաստանի Հայ կարեւոր վանքերու մէջ պահուած եկեղ. ձեռագիրներու: Կը կարծուի որ այդ ցուցակն ի մօտոյ հրատարակութեան արուի:

Թիֆլիզի մէջ ֆրանսերէնի ծանօթ ուսուցիչ և գրագէտ Պրն. Յարոյ ձեռնարկեր է Հայ. Ս. Եկեղեցւոյ մէկ քանի ընտիր Շարականները ֆրանսերէնի թարգմանելու, հանդերձ բանասիրական ծանօթութիւններով ու բացատրութիւններով: Հրատարակած նոյնչէնները բաւական յաջող են: Զատ գրքի ձեռով պիտի սպազրէ:


Ամերիկայի Հայոց Առաջնորդ Տ. Յովսէփ Էպսկ. Սարաճեան, որ իր հոգեւոր հովութեան շրջանակին մէջ կ'աշխատի օգտակար ըլլալ և տեղւոյն եկեղեցիներու նիւթական մատակարարութիւնը ապահովել, այս օրերս 3000 տոլարով երկու նոր տուն գնած է՝ իբր կալուած Ուսգըրի եկեղեցիին համար: Սարաճեան Էպսկ. Նիւ-Եորքի մէջ ալ եկեղեցի

մը շինել կ'ուզէ, և մինչև մէկ աստիճան այդ եկեղեցին ալ շինուելու ապահովութիւն կայ, քանի որ արդէն Թալչանճեան էֆ. և Կիւպէնկեան Եղարար խոտաւցած են 10,000 յաւանադար տալ. 10,000 տոլարի չափ խոտաւալ ալ առնուած է մնացեալ երկրորդ կարգի վաճառականներէն և ժողովուրդէն:

Ծաղիկ լրագիրը, որ դրեթէ երկու ամիս առաջ ինքնաբերաբար դադարեցուցած էր իր հրատարակութիւնը՝ իբրեւ օրաթերթ, նախորդ շաբաթէն վերսկսաւ հրատարակուիլ իբրեւ շաբաթաթերթ: Յաջողութիւն և յաւատեւութիւն կը մաղթենք:

ՕՍՄ. ՆՈՐ ԲԱՏԵՐԱԽՈՒՄԲԻՆ

ԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ



Նորակազմ Օսմ. կառավարչակ թատերախումբը, որ բուռն հետաքրքրութիւն մը կ'առթէ թատերասիրական շրջանակներուն մէջ և համակրութեամբ ողջունուելու ամէն հաւաստիք կ'ընծայէ արդէն, իր առաջին ներկայացումը պիտի տայ վաղը, կիրակի (Փիետրովար) ցերեկուան ժամը Ցին, Բերայի Բոնքօրտիա թատրոնին մէջ: Խումբին Տընօրէնն է, ինչպէս ծանուցինք, Պ. Կոնկէվի. իսկ ըէփէօնութիւնն ստանձնած է ծանօթ դերասան Չափրաւէճեան էֆ.: Ներկայացուելիք խաղերն են՝ ԹէնՈՐ ՏԱՄ. Պէրլիսի, զաւեշտ մէկ արարուածով, որուն պիտի յաջորդէ Թոմարիսի ՍՅՐԻՆԵՐԸ, կառավարչութիւն Աղեքս. Պիսոնի, Յարարուածով: Հին ու նոր դերասաններէ և դերասանուհիներէ կազմուած այս թատերախումբը ժամանցի սքանչելի միջոց մը կ'ընծայէ հասարակութեան, — ժամանց մը իր ամէնէն զբօսալի, վայելուչ ու հրահանգիչ ձեւին տակ, — որուն համար քաջալերանք արժանի է: Խղճամբն նախապատրաստութիւններով, երկար մարզանքներով ու նիւթական զոհողութիւններով կատարուած թատերական ձեռնարկութիւն մըն է այս, որուն սիլլընաւորութիւնը պիտի ողջունենք վաղ և որ յարատեւութեան ամէն երաշխաւորութիւն կ'ընծայէ:

Մուտքի գինը չափաւոր են:

Արժանեք Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՆԵԼԻՔ Օրագրի



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ




ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

Ընկերության զրամագլուխը, ամբողջապես վճարուած	10,667,667	Ֆրանք
1901 տարւոյ մէջ դանձուած ապահովագրիւններ ու տոկոս	54,000,000	»
Երաշխաւորութեան գումար	122,000,000	»
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400,000	»

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ Քարափին վրայ, Մախսաճն հին տեղը

Ընդհ. Քննիչ
Ա. ՀԻՒՐՄԻՒԶ

Ընդհ. Գործակալ
ԹԷՈՏՈՐ ՌԷԲԵԼՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ստանալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՂԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը զնէ։

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ։

ՇԱՐԺԱՔԱՆԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲՆԲՐԱ

1. Մեծ փողոց, Պոն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿՍԼԱԹԱ

1. Սինկէր խան, Թիւնէլին կողքը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղիա, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԵՐԻՍԵՐ

Չարչը Պոյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաշխաւորութիւն։

Մասնահիւր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը։

ՄԱՍԻՍԻ Խմբագրութեան Է. Տնօրենութեան կեդրոնն է Ղալաթիա, Քամանցօ փողոց, քիւ 8, Օսմ. Նամակասան Ետին, «Արեւելք»ի Խմբագրատունը: Հետեւաբար, քերքին հետ ու Է գործ ունեցողները կը հրաւիրուին հոն դիմել: Թղթաստական հասցէ, Խմբագրութիւն «Մասիս» Շաբաթաբերքի Ղալաթիա, Կ. Պոլիս

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ-ՓՈՂՈՑ, Թ. 200

ԿԱԼԱԹԱ-ՍԷՐԱՅԻ ԼԻՍԷԻՆ ԴԷՄ

ԴՇ. ԵՇ. ՇՔ. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11½
ԲՇ. ԴՇ. ՈՐ. օրերը ճէն մինչեւ 11½
Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՏՈՔԹՈՐ Լ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ-ՄԱՆԿԱԲԱՐՁ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց (Վիայնալ Բաքիզէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հիւանդութիւններ, կը կատարէ վիրաբուժական գործողութիւններ՝ վերջին կատարելագործեալ դրութիւններով:

Բարիդի, Նանսիի հիւանդանոցներուն մէջ երկար տարիներ օգնական-բժիշկի (էֆըքերն) պաշտօնը վարած ըլլալով, գործնական ու փորձառական երկար ուսումնասիրութիւններ ընելէ վերջ, այս անգամ Կ. Պոլիս եկած է հաստատուած է Բերա, Թարլա Պաշը, թիւ 136:

Ծանօթ. — Հիւանդներ կ'ընդունին ամէն օր կէս օրէն վերջը իր բնակարանին մէջ, ժամը 1-4 (Ը. Ե.). Երեքշաբթի օրերը միեւնոյն ժամուն ձրիաբար կը դարմանէ կարօտ հիւանդները:

5-20

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԴՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԶԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասը	240,000,000	Փր.
1899ին գանձուած ապահովագին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

ԿԵՆԱՅ ԶԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասը	99,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստը	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողը ՉԵՐԾ է՝ այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաղման (accumulation des bénéfices) ՅՅՈՒԻ եւ ՎՆՍՄԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրենքիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թափապուրուն Խան, Օսմ. Պանֆային դիմացը

Գործակալութիւնը Թուրքիոյ գլխաւոր քաղաքացի մէջ